

ՀԱԿՈՐ ՄԱՐԹԱՅԱՆ (ԴԻԼԱԶԱՐ) ԼԵՉՎԱԲԱՆԸ *

ՀՏԴ 80

DOI: 10.52063/25792652-2023.1.16-232

ԱՇՈՏ ՄԿՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
հայ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի պատմության և
ընդհանուր լեզվաբանության ամբիոնի մագիստրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ashot.mkrian@outlook.com
ORCID: 0009-0007-8881-1818

Հոդվածը նվիրված է հայ մեծանուն լեզվաբան և թարգմանիչ, պատմաբան և գրականագետ, մանկավարժ և բարեփոխիչ Հակոբ Մարթայանի կյանքին ու գործունեությանը:

Հատուկ շեշտադրությամբ անդրադարձ է կատարվում հանրապետական Թուրքիայում տեղի ունեցած մշակութային, գիտական և կրթական բարեփոխումներին, որոնց մեջ կարևոր միջոցառումներից էր արաբագիր այբուբենից անցումը լատինագրի. անվանի լեզվաբանն այստեղ մեծ դերակատարություն է ունեցել:

Մարթայանը պետականաշինության մեջ, գլխավորապես լեզվական բարեփոխումների ուղղությամբ, խորհուրդներ է տվել Մուսթաֆա Զեմալին: Այս հանգամանքն ավելի է ընդգծում Հակոբ Մարթայանի գործունեությանն անդրադառնալու կարևորությունը:

Ներկա հոդվածի նպատակն է Մարթայանի անձի, նրա կյանքի որոշ դրվագների և կատարած բարեփոխումների ներկայացումն ու քննությունը:

Հետազոտության շրջանակում առաջադրվել է հետևյալ հիմնական խնդիրը՝ լուսաբանել Մարթայանի ծավալած հայանպաստ գործունեությունը: Կիրառվել են պատմական, կենսագրական, քննական և վերլուծական մեթոդները:

Քննվող թեմայի վերաբերյալ առկա գրականության հենքի վրա կատարված վերլուծությունն ու համադրումը հիմք են տալիս եզրակացնելու, որ հայ լեզվաբանը մեծ ավանդ է ունեցել ոչ միայն Թուրքիայի Հանրապետության գիտամշակութային կյանքի կայացման գործում, այլև մեծապես նպաստել է տեղի հայության ազգային մշակված լեզվի պահպանմանը. Մարթայանը պայքարել է, որ տեղի հայերը չկորցնեն իրենց լեզվական ինքնությունը:

Հիմնաբառեր՝ Թուրքիայի Հանրապետություն, Հակոբ Մարթայան, Դիլազար, լեզվաբան, Մուսթաֆա Զեմալ, Աթաթյուրք, այբուբեն, բարեփոխումներ:

Մուտք

Փաստ է, որ հայերը հսկայական դեր են խաղացել Օսմանյան կայսրության և նրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության կայացման գործում: Ասվածը

* Հոդվածը ներկայացվել է 15.02.2023թ., գրախոսվել՝ 21.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

հիմնավորելու համար բավարար է թվել այն հայ անհատների անունները, որ անուրանալի ներդրում են ունեցել թուրք ժողովրդի կյանքի ամենատարբեր ասպարեզներում: Այդպիսիք շատ են, ինչպես՝ Համբարձում Լիմոնճյանը (անվանի խմբավար, երաժշտագետ, թուրքական երաժշտության մեջ նոտաների համակարգի ներմուծողը), Էդգար Սանասը (նշանավոր երգահան, երաժշտագետ, Թուրքիայի ազգային օրհներգի՝ «Անկախության մարշ»-ի (թուրք.՝ *İstiklâl Marşı*) երաժշտության հեղինակներից մեկը), Մկրտիչ Մկրյանը, Վահրամ Փափազյանը (ազգությամբ հույն Ալեկո Մոսլլոսի հետ Օսմանյան կայսրության միակ ներկայացուցիչները և առաջին հայ մարզիկները, որ մասնակցել են Օլիմպիական խաղերին), Պերճ Զերեթթեյանը (թուրքերենի առաջին ստուգաբանական բառարանի հեղինակը), Հակոբ Վահրամ Չերչիյանը (գեղագիր, Աթաթյուրքի ստորագրության հեղինակը) և ուրիշներ: Սրանք անուններ են, որ խոսուն պետք է լինեն հատկապես թուրքերի համար: Հակոբ Մարթայանն այդ խոշորագույն անհատներից մեկն է, որին և նվիրված է ներկա հոդվածը:

Մեծ կյանքի շեմին

Մեծանուն լեզվաբան և թարգմանիչ, պատմաբան և գրականագետ, մանկավարժ և բարեփոխիչ Հակոբ Վահանի Մարթայանի հայկական ծագման մասին Թուրքիայում նախընտրում են չհիշել, սակայն չեն կարող ուրանալ հանրապետության պատմության մեջ նրա թողած անջնջելի երախտիքը:

Ծնվել է 1895 թ. մայիսի 22-ին Կ.Պոլսում: Սերում է Կեսարիայից Կ.Պոլիս գաղթած հայ առևտրականների ընտանիքից: Հայերենին և անգլերենին տիրապետում էր դեռ վաղ տարիքից: Միջնակարգ կրթության տարիներին սովորել է հունարեն և իսպաներեն: Նախնական կրթությունը ստացել է միսիոներների հիմնադրած Գեդիքփաշայի (թուրք.՝ *Gedikpaşa*) ամերիկյան դպրոցում (1910) (Աղայան 106):

Լեզուների հանդեպ առանձնահատուկ կիրք է ունեցել. դեռևս դպրոցական տարիներին սկսել է ուսումնասիրել լատիներեն, հին հունարեն և գերմաներեն: Ռուսերենին և բուլղարերենին ծանոթացել է օտարերկրացի աշակերտների միջոցով: Մարթայանի վրա մեծ ազդեցություն է ունեցել հատկապես ուսուցիչը՝ Թևֆիք Ֆիքրեթը (թուրք.՝ *Tevfik Fikret*)¹, որի շնորհիվ և մեծ հետաքրքրություն է սկսում ցուցաբերել օսմաներենի ուսումնասիրության նկատմամբ, ինչն էլ տարիներ հետո պիտի բախտորոշ լիներ իր կյանքում (Աղայան 56):

Թյուրիմացություն, որ մեծ բարեկամության սկիզբ է դառնում

Տակավին 19 տարեկան երիտասարդ էր, երբ սկսվեց Առաջին համաշխարհայինը: 1915-ին ավարտելով Ռոբերտ քոլեջը²՝ պատերազմի պատճառով անմիջապես զորակոչվում է թուրքական բանակ: Նրան տանում են Կովկասյան ճակատ: Սակայն քանի որ այդտեղ մեծ էր անվստահությունը հատկապես հայ զինվորների նկատմամբ, շուտով տեղափոխում են հարավային (Սիրիական) ճակատ, որտեղ թուրքերը կռվում էին անգլիացիների դեմ (Աղայան 55):

Այդ օրերի հետ կապված հետաքրքրական մի դիպված կա, որը նոր հուն պիտի բացեր Մարթայան լեզվաբանի կյանքում:

¹ Թևֆիք Ֆիքրեթ (իսկական անունը՝ Մեհմեդ Թևֆիք, հայտնի է նաև որպես Թևֆիք Նազփի, 1867-1915), թուրք բանաստեղծ: Համարվում է թուրքական պոեզիայի արդի դպրոցի հիմնադիրը:

² Ռոբերտ քոլեջ (թուրք.՝ *Istanbul Özel Amerikan Robert Lisesi* կամ *Robert Koleji*), հիմնադրվել է 1863-ին Կ.Պոլսում:

Ինչպես վերև ասվեց, փայլուն տիրապետում էր անգլերենին, և անգլիացի ռազմագերի սպաները հենց նրան են խնդրում թուրք հրամանատարներին փոխանցել, որ վերջ տան իրենց դեմ գործադրվող անմարդկային բռնություններին: Թուրք սպաները, կարծելով, որ զինվորը դավաճան է՝ անգլիացիների լուտերը, նրան անմիջապես տանում են Դամասկոսի շտաբի հրամանատարի մոտ: Համարձակ տղան սկսում է խոսել, վճռականորեն հաստատել այն միտքը, որ բռնությունը հատուկ է եղել սուլթանական վարչակարգին և մերժելի պիտի լինի հանրապետական կարգերի ձգտող գործիչների համար. «....Բոլորը շվարած ինձ էին նայում և սպասում, թե ինչ կասի հրամանատարը, իսկ հրամանատարը ուշադրությամբ լսում էր: Մեկ էլ նա հրամայեց ձեռքերս ազատ արձակել: Ինձ բերողներին հեռացրեց սենյակից, իսկ ինձ առաջարկեց նստել: Ես շվարած էի և մտածում էի, թե ինչով պիտի վերջանա... Հրամանատարը թեյ առաջարկեց և խնդրեց պատմել հասարակական կյանքի նպատակահարմար կառուցվածքի և դեմոկրատական սիստեմների մասին... Ես կասկածանքով մտածում էի, թե ինչ-որ խաղ է կատարվում ինձ հետ....» (Աղայան 55-56):

Հետագայում Մարթայանը պետականաշինության վերաբերյալ խորհուրդներ պիտի տար այդ նույն հրամանատարին, որ Մուսթաֆա Քեմալն էր՝ Թուրքիայի Հանրապետության հիմնադիրն ու առաջին նախագահը:

Մարթայանին հաջողվում է լքել թուրքական բանակն ու մեկնել արտասահման¹, ապա վերադառնում է Ստամբուլ և դասավանդում Ռոբերտ քոլեջում (այժմ՝ Բողազիչի համալսարան): Հալեպահայ գրականագետ և հրապարկախոս Լևոն Շառոյանը գրում է. «1918-19 կրթաշրջանին Յակոբ Մարթանանը կը գտնենք Պեյրութ, ուր տնօրեն նշանակուած է տեղւոյն Ազգ. վարժարանին (Ս. Նշան եկեղեցւոյ կից): Շուտով յայտարարուեցաւ Չինադադարը, ու ինք քաջայերուած անկէ՝ իսկոյն վերադարձաւ Պոլիս եւ անգլերէնի դասատու նշանակուեցաւ Ռոպերթ Գոլեճի մէջ: 1922ին, Թուրքիոյ արդի հանրապետութեան հռչակումի նախօրէին, անցաւ Պուլկարիա եւ մայրաքաղաքին համալսարաններէն մեկուն մէջ հին արեւելեան լեզուներու եւ օսմաներէնի դասախօս դարձաւ: Բացառիկ ու անկրկնելի լեզուաբան մըն էր: Հնդեւրոպական ապրող ու շնչող գլխաւոր լեզուներէն զատ՝ ծանօթ էր հին դարաշրջաններու մեռեալ լեզուներուն ալ՝ հիթիթերէնէն սկսեալ մինչեւ ուրարտերէն, պահլաւերէն ու լատիներէն...» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Հակոբ Մարթայանը և Մուսթաֆա Քեմալի լեզվական բարեփոխումների ծրագիրը

1923 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան հռչակվեց հանրապետություն: Խալիֆայության վերացմանը զուգընթաց սկսվում է պետական և մշակութային կրթական համակարգի աշխարհիկացման գործընթացը (Թուրքիայի Հանրապետության պատմություն 54):

1931-1932 թթ. Քեմալը նախաձեռնում է Թուրքական պատմագիտական ընկերության (թուրք.՝ *Türk Tarih Kurumu*) և Թուրքական լեզվաբանական ընկերության (թուրք.՝ *Türk Dil Kurumu*) հիմնումը՝ նպատակ ունենալով Թուրքիայի վերաբերյալ պատմագիտական, լեզվաբանական և գրականագիտական հետազոտությունների համախմբում-վերամշակումը՝ որպես թուրքական ազգային նոր ինքնության կառուցակազմման գլխավոր գրավականներ: Կրթական բարեփոխումների շարքում

¹ Նախքան պատերազմի ավարտը Մարթայանը լքում է օսմանյան բանակը և ապաստանում Լիբանանի Չաիլե քաղաքում. փոքրաթիվ հայկական գաղութում ձեռնամուխ է լինում «Լույս» անունով թերթի հրատարակությանը:

կարևոր միջոցառումներից էր այբբենական բարեփոխումը՝ նախկին արաբագրից անցումը լատինագրի (Թուրքիայի Հանրապետության պատմություն 60-61):

Մարթայանի ունեցած կապերի մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում պոլսահայ գրող, «Մարմարա¹»-ի խմբագրապետ Ռուպեր Հատտեճյանը «Օտարականներ՝ աշխատասենեակիս մեջ» հուշատետրային հատորաշարքում. «...Մարթատան Պուկլարիայեն Անգարա հրաւիրուած էր Աթաթուրքին կողմէ: Աթաթուրք, որ լեզուական յեղաշրջում մը իրականացնելու էր թուրք լեզուն Նորոգելու ու իր ակունքներուն վերադարձնելու կը ցանկար, լսած էր որ Սոֆիայի մէջ կար հայ մը որ այդ գործը իրականացնելու ատակ թերեւս միակ անձնաւորութիւնն էր: Չիկքը հրաւիրած էր Անգարա: Մարթատան բաւական վարանած էր այդ հրաւերը ընդունելու, որովհետեւ ան կ'ուզէր օգտակար հանդիսանալ հայ մշակոյթին եւս, սակայն ի վերջոյ ընդունած էր հրաւերը...» (112):

Այն փաստը, որ Մարթայանն անմիջապէս չի ընդունել առաջարկը, հաստատում է նաև հետևյալ հաղորդումը. «...Մարթատան սկիզբը վարանեցաւ, սակայն յետոյ ընդունեցաւ այս առաջարկը: Այնուհետեւ, յատուկ անցագիր շնորհուեցաւ իրեն եւ վերահաստատուեցաւ իր թրքահպատակութիւնը: Նոյնիսկ մասնաւոր դիւրութիւններ ընծայուեցան իրեն՝ որպէսզի Սոֆիայէն Անգարա փոխադրէ իր հարուստ գրադարանը» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Լատինական այբուբենին անցնելու համար վճռորոշ է եղել Մուսթաֆա Բեմալի 1928 թ. օգոստոսի 9-ի ելույթը Գյուլիանեում. «Քաղաքացիներ, մենք պետք է նոր այբուբենն ընդունենք հանուն մեր սքանչելի, հարուստ լեզվի: Մենք պետք է ձերբազատվենք անհասկանալի նշաններից, որոնց երկաթյա մամլակների ներքո ճզմվել է մեր միտքը հըրթացս դարերի... Քաղաքացիներ, անմիջապէս ձեռնամուխ եղէք նոր թուրքերեն տառերը սովորելուն: Համարեք այն որպէս հայրենասիրական ազգային պարտականություն» (Թուրքիայի Հանրապետության պատմություն 61):

Բեմալը, որպէս «ազգային դպրոցի ուսուցիչ», սկսելով քարոզարշավը, ցույց էր տալիս, թե ինչքան ավելի հեշտ է սովորել լատինագիրը, քան արաբատառ այբուբենը (The Turkey of Atatürk 130):

Ականատեսները հաղորդում են, որ Բեմալը, գրատախտակով ու կավճով շրջում էր Թուրքիայի նահանգներով և ժողովրդին սովորեցնում նոր գիրը. նրա օրինակին հետևում էին բարձրաստիճան պետական գործիչներ: Շուտով ամբողջ Թուրքիան վերածվում է մի մեծ դպրոցի: Օրենք է ընդունվում լատինատառ այբուբենը պարտադիր կիրառելու և արաբատառն արգելելու մասին: Պետական բոլոր պաշտոնյաները պարտավորվում են քննություն հանձնել (Պոզնանսկա 58):

Աթաթուրք և Դիլաչար. ազգանունների «փոխանակման» պատմությունը

Հերթական բարեփոխումը վերաբերում էր ազգանուններին: Մինչ այդ թուրքերն ունեին միայն անուն, ինչը բարոզացնում էր հաշվառման գործընթացը: Փաստորեն, այս հնարավորությամբ, յուրաքանչյուր քաղաքացի պարտավորվում է ազգանուն ընտրել՝ մեկ պարտադիր պայմանի՝ ազգանվան երկու անգամ չկրկնվելու պահպանմամբ: Որպէս կանոն, միևնույն ընտանիքի անդամներն ընդունում էին մեկ ընդհանուր

¹ «Մարմարա» օրաթերթը Կ.Պոլսի (Ստամբուլ) հայ համայնքի ուշագրավ թերթերից մեկն է: Պարբերականը հիմնադրվել է Կ.Պոլսի հայ համայնքի անվանի ներկայացուցիչ Սուրեն Շամյանի ջանքերով 1940 թ. օգոստոսի 31-ին: Մինչև 1951 թ. հուլիսի 25-ը, այսինքն՝ մինչև իր մահը, թերթի խմբագիրն է եղել: Շամյանի նվիրական գործը շարունակվելու պարտականությունը և պատասխանատվությունը ստանձնել են դուստրը՝ Սեդան, և Պետրոս Չոպյանը: Տե՛ս Էլինա Միրզոյան, «Մարմարան»՝ հայ մշակույթի հանգրվան, «Էջմիածին» կրոնական և հայագիտական հանդես, Ս. Էջմիածին, 2011, հատոր ԿԷ, հ. Ժ, էջ 52:

ազգանուն (Պոզնանսկա 58): 1934-ին, երբ ընդունվում է ազգանունների մասին օրենքը, թուրքերենի ուսումնասիրության մեջ ունեցած նշանակալի ավանդի համար Զեմալը Մարթայանին շնորհում է «Դիլաչար» (թուրք. թարգմ.՝ *լեզու բացող*) ազգանունը (Պոզնանսկա 61; Bedrosyan 209): Համարվում է, որ հենց նա է Թուրքիայի Ազգային մեծ ժողովին առաջարկել Սուլթաֆա Զեմալին տալ «Աթաթյուրը» (թուրք. թարգմ.՝ *թուրքերի հայր*) ազգանունը. «Յակոբ Մարթայեան 1934ին ստիպուած էր իր հայկական մականունէն հրաժարելու եւ որդեգրելու թրքերէն մականուն մը, ինչպէս - Թուրքիոյ բոլոր քաղաքացիները, որոնք մինչ այդ մականուններ չունէին: Թուրքերը կը գործածէին Էֆենտի, աղա, պէյ, փաշա, հաֆիզ (Զուրանը գոց սորված անձ), հանըմ, հաճի (Սոհամետ մարգարէին գերեզմանը այցելած անձ) կամ հոճա (ուսուցիչ, դաստիարակ) տիտղոսները, որոնք ահաւոր կացութիւն մը կը ստեղծէին, որովհետեւ ալ կրնայ պատկերացնել, թէ քանի միլիոն կիմետ պէյ, կամ Սուլթաֆա Էֆենտի կրնար ըլլալ: Ոչ ոք ունէր գերդաստանական պատկանելիութեան գիտակցութիւնը եւ զգացողութիւնը: Անշուշտ ոչ-թուրք քաղաքացիները այս ինդիքը չունէին: Հայեր, յոյներ, հրեաներ, արաբներ թէ պալքանեան բազմաթիւ ժողովուրդներ ունէին իրենց մականունները, որոնցմէ ձերբագատուելու պարտադրանքին ենթարկուեցան Մականուններու օրենքով՝ 21 Յունիս 1934ին որդեգրուած օրենքով: Սուլթաֆա Զեմալ եւ Յակոբ - Մարթայեան իրարու առաջարկեցին մականուններ: Սուլթաֆայի անուն կցուած էր իր հորը՝ Զեմալի անունը...» (<https://azator.gr/%d5%a1%c2%ad%d5%af%d5%b8%d5%a2>):

Լևոն Շառոյանը գրում է. «Մականունի այս ակնբախ փոփոխութիւնը արդիւնքն էր 1934-ին մշակուած ու ի գործ դրուած «Մականունի օրենք»ին, որ կը յեղաշրջէր թրքահպատակ քաղաքացիներու ազգանունները ու կ'արգիլէր տոհմային, ցեղային կամ ազգային բնոյթ կրող օտարահունչ մականուններուն գործածութիւնը...: Այս ծիրէն ներս, այլեւս մեծաւ մասամբ անընդունելի կը նկատուէին նաեւ հայկական մականուններու «եան»երը ու հարկ էր շուտափոյժ փոփոխութեան ենթարկել զանոնք...» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Պաշտոնական այս նոր ազգանունը, Շառոյանի համոզմամբ, նպատակահարմար չէր. «...Ենթակային ազգային ինքնութիւնը կը քօշարկուէր լրիւ, մանաւանդ որ 50ական թուականներէն սկսեալ թրքերէնով հրատարակած լեզուագիտական իր տասնեակ գիրքերուն ճակտին վրայ, գրեթէ միշտ, հեղինակային իր անունը նշուած կ'ըլլար A. Dilaçar ձեւով» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Մինչև 1932 թ. Մարթայանը զբաղեցրել է Բեյրութի առաջին հայկական վարժարանի տնօրէնի պաշտոնը, հիմնել «Ռահվիրա» և «Մշակոյթ» թերթերը (Սոֆիա), խմբագրել «Լույս» շաբաթաթերթը (Բեյրութ): Հետագայում Բուլղարիայում զբաղվել է հայագիտությամբ: Այդ տարիներին գրում է մի շարք գրքեր՝ «Առաջին փորձութիւն» պիեսը (1922, Կ.Պոլիս), «Ալքիոնի պարտեզէն» անգլիացի բանաստեղծների երկերից թարգմանված հատընտիրը (1929, Սոֆիա) ևն¹:

1936-1950 թթ. Անկարայի համալսարանում դասախոսել է լեզվաբանության պատմություն և ընդհանուր լեզվաբանություն, իսկ 1942-1970 թթ. եղել է թուրքական

¹ Բուլղարիայում իր կեցության տասնամյա շրջանում Մարթայանի անունը կապված է երկու պարբերականի՝ Սոֆիայի հայ ուսանողների «Ռահվիրայ» ամսաթերթի (1926) և «Մշակոյթ» անկախ շաբաթաթերթի (1928) հետ: Աշխատակցել է Պոլսի հայ լրագրերի՝ «Ժամանակ», «Արեւելք», «Ազդարար», իսկ 1950-ականներից, երբ բնակվում էր Անկարայում, Մարթայանի «գլխավոր բեմը» «Մարմարա» օրաթերթին էր, որտեղ փառավորում էր պատմության նշանավոր դեպքերը և ժողովրդի ուշադրությունը հրավիրում որոշ թվականների կարևորության վրա («Մարմարա»-ում հրատարակում է «Համայնապատկեր հայ մշակոյթի» խորագրով ծավալուն և լայնաշունչ մի ուսումնասիրություն, որը շուրջ յոթ տարի շարունակ լույս է տեսնում մոտ 1500 օր), իսկ 1956-ին Պոլսում տպագրվում է Մարթայանի «Աստուածաշունչը եւ աշխարհաբարը» գրքուկը: Տե՛ս <http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>:

Հանրագիտարանի ավագ խորհրդատուն, ապա՝ գլխավոր խմբագիրը (Հայկական Սովետական Հանրագիտարան 720)¹:

Բնակություն հաստատելով Անկարայում՝ Մարթայանը դառնում է Մուսթաֆա Զեմալի գլխավոր խորհրդատուն ոչ միայն լեզվի, այլև գիտության, մշակույթի և լուսավորության բնագավառում: Իր և Զեմալի հարաբերությունների մասին Մարթայանը պատմում է հետևյալը. «Մի անգամ Մուստաֆա Զեմալը հրավիրելով Ստամբուլի Դոլմա Բախչեի պալատում իր աշխատասենյակը, ցույց է տալիս տարբեր երկրներից ստացած անկարգ թափված գրքերը և խնդրում դրանց կարգավորել և իրեն պատմել կարևորների բովանդակությունը: Հատկապես նրան հետաքրքրում էր այն հարցը, թե դրանցից ինչ օգտակար բան կարելի կլինի քաղել Թուրքիայի պետական շինարարության համար...» (Աղայան 58-59):

«Ադիլ Աչար. անունը Հակոբ Է»²

1979 թ. սեպտեմբեր 12-ին Հակոբ Մարթայանը Պոլսում կնքում է իր մահկանացուն. «...Մարթաեանի յուղարկաւորութիւնը կը կատարուէր Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, Սեպտեմբեր 18ին, հանդիսապետութեամբ Շնորհք Պատրիարքի, որ նաեւ կը խօսէր դամբանականը: Դուրսը, բակին մէջ, դամբանականներ կ'արտասանէին նաեւ թուրք յայտնի պատմաբան փրոֆ. Ճավիտ Օրհան Թիւթէնկիլ, Սաիտ Սատի Տանիշմէնտ-Կազիօղլու, Վահէ Սէֆերեան եւ Փանոս Էօզարարատ: Ցաւակցական հեռագիրներ կը հասնէին Թուրքիոյ Հանրապետութեան նախագահէն ու վարչապետէն: Յետոյ, մեռելակառքը կ'ուղղուէր դէպի Շիշլի: Հայոց պատմական գերեզմանատունը կը դառնար ի՛ր ալ վերջին հանգստավայրը՝ մեծանուն անհամար դէմքերու դրացնութեան մէջ...» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Վերջակետ է դրվում արտակարգ հարուստ ու լիարժեք մի կյանքի, որն անցել էր առավելաբար գրքերի ու մատյանների մտերմության մեջ. «Մարթաեան հաւատարմօրէն թուրք լեզուաբանութեան նուիրեր էր իր կեանքին մեծագոյն շերտը, հոգ չէ թէ յուսաբեկութիւններ ապրած ըլլար Անգարայի ակադեմական իր շրջապատին մէջ իսկ: Իր սիրտը տեսաբար բաբախած էր հայութեամբ, հակառակ քղամիդի մը նման իր ուսերուն նետուած «Ա. Տիլաչար» անունին, ու հակառակ այն անուպայ յարձակումներուն, որոնց թիրախ պիտի դառնար հայ մամուլի էջերուն մէջ՝ իր ծերունագարդ տարիքին իսկ» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Հակոբ Մարթայանի մահվան լուրը թուրքական պետական լրատվամիջոցները հնչեցնում էին այսպես. «Անուանի լեզուաբան Ատիլ Աչար կնքեց իր մահկանացուն...» (Bedrosyan 209):

Լեզվաբանի «Դիլաչար» ազգանունը կիսել և առաջին մասի դիմացից կպցրել էին «Ա» տառը («Ակոբ»-ի սկզբնատառին)՝ ստեղծելով նոր անուն-ազգանուն. «...Դիտաւորեա՛լ էր յետ մահու այս «անուանակոչութիւն»ը, թէ՛ հաղորդավարին ապիկար մէկ սայթաքումն էր, յայտնի չէ: Ինչ որ յստակ էր սակայն ու կասկած չէր վերցներ, այն էր՝ որ պատկերասփիւռ-ձայնասփիւռի պետական լրատու գործակալութեան աղուէսաբարոյ խմբագիրները ենթակային հայկական ինքնութիւնը թաքցնելու միտումով փորձած էին անպայման խուսափիլ «Ա.» տառին ետին մնացած ԱՎՈԲ անունին յիշատակութենէն...: Դեռ կար ակելի՛ն ալ: ԹԷ.ԲԷ.ԹԷ. ո՛չ մէկ մանրամասնութիւն կու տար վախճանեալ «Ատիլ Աչար»ի յուղարկաւորութեան կամ թաղման կապակցութեամբ, ըստ երեւոյթին՝ խուսափելու համար Հայոց եկեղեցիին կամ հայկական գերեզմանատան անուններուն յիշատակութենէն ալ...: Յաջորդ օր, թուրք

¹ Հանրագիտարանի լույսընծայումը սկսվել է 1943-ից: Շարքն ամբողջացել է 1985-ին:

² Ռ. Հատտեճյանի ակնարկը «Մարմարա» օրաթերթում:

մամուլը, նուազ ձախորդ, պարզապես կ'իմացներ, թե Իսթանպուլի մեջ մահացել էր Թուրք Լեզուի Կաճառի հիմնադիր անդամներէն Ա. Տիլաչարը...» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Մարթայանի այս վրդովեցուցիչ պատմությունը պոլսահայ համայնքը հաշտ աչքով չի դիտել. «...Մարթատեանի մահէն երկու օր ետք, Սեպտեմբեր 14ին, «Մարմարա»ի մեջ գրագետ Ռ. Հատտեճեան կը ստորագրէր «Անունը Յակոբ Է» խորագրեալ դիպուկ ակնարկ մը, յիշեցնելու համար թե հանգուցեալ լեզուաբանին անունը «Ա.» չէր, այլ «Յակոբ» էր...» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Դիլաչարի դերը փաստորէն մեծ է հատկապէս թուրք լեզվի և ընդհանուր լեզվաբանության բնագավառում: Անկարայում լույս տեսած «Լեզու, լեզուներ և լեզվաբանություն» (*Dil, diller ve dilcilik*, 1968) մենագրությունը լեզուների համակարգման և տեսական հարցերի ընդհանրացման բնագավառում խոշոր ներդրում է: Աշխատության մեջ պատշաճ տեղ է հատկացված նաև հայոց լեզվին, բնութագրված են գրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի հնչյունաբանությունը և բառարանային կազմը (Աղայան 63):

Հատտեճյանը գրում է. «...Հակառակ, որ այլևս ամբողջ իր կեանքը տրամադրած էր թուրք լեզուագիտութեան ու թրքական համայնագիտարանը խմբագրելու գործին, հայ մշակոյթի ովկիանոսը որեւէ զաղտնիք չունէր իրմէ: Ինք իր այդ ահաւոր հմտութիւնը տարիներ վերջ պիտի ապացուցանէր Մարմարա-ի մեջ օրը օրին հրատարակելով կոթողային յօդուածաշարք մը, «Համայնապատկեր Հայ Մշակոյթի», որ իր տեսակին մեջ աննման պիտի ըլլար, այնքան ծովածաւալ ու ընդարձակ՝ որուն մեջ կրնային խեղդամահ ըլլալ ո՛չ միայն ընթերցողները, այլ նաեւ ինքը՝ հեղինակը...» (111):

Հայոց լեզուն Մարթայանի համար աշխարհի ամենագեղեցիկ և հարուստ լեզուն է. «...Երբ կը բանամ քու բառամթերքիդ գանձատունը, ո՛վ պաշտելի մայրենի լեզու, Սողոմոնեան շքեղանքի ու Կրետոսեան պերճանքի տեսարանին առջեւ կը հիասարսռիմ ու շլացած աչքերով կը դանդաչեմ – հարստութիւն մը՝ ուր գոյականներն են շողակ ու լսնոսկի, ածականները՝ յակինթ ու մարգարիտ, բայերը՝ գրովիստ ու շափիւղայ, յօդերն անգամ՝ սուտակ ու ամբոս: Կը տողանցեմ արմատներու եւ ածանցներու բազմութեան մը առջեւէն, բանակներու չափ հոծ, սակայն ամէն ինչ կանոնաւոր՝ ինչպէս փեթակի մը բջիջները, ու նրբակերտ՝ ինչպէս Տէրը իր արարչական մատներով կը ծրարէ իւրաքանչիւր ծաղկի թերթերը իր կոկոնին մեջ. զաղտնիք մը, որուն Աստուած հաղորդակից ըրաւ Մեսրոպն ու Եզնիկը, որպէս հայ լեզուի մարգարէներ: Հոն, այդ աշխատանոցին մեջ, օժտուած ամենատուրք գործիքներով, իմաստներու անհունապէս այլազան երանգաւորումներն անգամ դիմագրաւելու համար՝ կը գտնեմ ճոխ մթերք ու կազմած, նոյնիսկ բաւականէն աւելի» (<http://armeniaca-haygagank.blogspot.com/2014/02/35.html>):

Մարթայանը ճակատագրի բերումով ապրել և աշխատել է Հայրենիքից դուրս. Խորհրդային Հայաստանի գիտնականների հետ հանդիպման ժամանակ մեծանուն գիտնականը հուզմունքով նշել է. «...Իմ տեղը Հայաստանում պետք է լիներ, սակայն բախտը չժպտաց ինձ, դեպքերը այլ ընթացք ստացան: ՀՕԿ-ի ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը իմ լավ բարեկամն էր, հայ ժողովրդի նվիրված զավակն ու երախտավորը: 1934-1936 թթ. նա հոգ էր տանում, որ ես Հայաստան մեկնեմ, և իմ գիտելիքները ի սպաս դնեմ մայր Հայաստանի բարօրությանը: Սակայն չլիճակվեց իրականացված տեսնել իմ երազանքը...» (Աղայան 54):

Առաջին հայացքից թվում է, թե Մարթայանը բացառապես թուրք լեզվաբանության մեջ ավանդ ունի, սակայն հարկ է նկատել, որ մեծանուն լեզվաբանը նաև խորապես գիտակցել է, որ այդ ժամանակաշրջանում Թուրքիայում կար «խառնալեզվի» առաջացման վտանգ, այսինքն՝ հայերենի այլասերումն ու կորուստն անխուսափելի էին, քանի որ թուրքական միջավայրում արդեն փոքրամասնություն էր

դառնում հայությունը: Նա հավասարապես կանոնարկել է թե՛ արևմտահայերենը, թե՛ թուրքերենը՝ պահպանելով երկուսի լեզվական անադարտությունն ու կառուցիկությունը: Լեզվաբանի գործունեությունը շատ կարևոր էր նախ և առաջ տեղի հայության ազգային մշակված լեզուն պահպանելու համար: Մարթայանը պայքարել է, որ Թուրքիայի հայերը չկորցնեն իրենց լեզվական ինքնությունը:

Եզրակացություն

Ամփոփելով փաստերը, որ թեման՝ իր հակասական ընկալումներով, գիտակարգային նոր և բազմակողմանի քննության անհրաժեշտություն ունի:

Նկատի ունենալով թեմայի ուսումնասիրվածության աստիճանը՝ նշենք, որ վիճարկելի խնդիրների լուծումը համարում ենք նորահայտ աղբյուրների բացահայտումը:

Ներկա հոդվածը ընդամենը նախնական ներդրում է: Հույսով ենք՝ մեր հետագա աշխատանքներում կգարգացնենք այս ուղղությունը և նոր հրապարակումներով կհամալրենք Մարթայանի լեզվաբանական ժառանգության վերաբերյալ հետազոտությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան, Ծատուր. *Հայերը Թուրքիայում*, Երևան, Հայաստան, 1994;
2. Ապտալեան, Արմեն. *Ակոր Տիլաչար՝ լատինատառ թրքերենի կնքահայրը*; «Ազատ օր», 16 մարտի 2017;
3. *Թուրքիայի Հանրապետության պատմություն: Բուհական դասագիրք*, Ռ. Սաֆրաստյան և ուրիշ., Երևան, ՎՄՎ-Պրինտ, 2018;
4. *Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 7*, Երևան, 1981;
5. Հատտեճեան, Ռոպեր. *Օտարականներ՝ աշխատասենեակիս մեջ կամ Խթանապուկահայ գրականության վեպը*, Խթանապուկ, Մարմարա-Մուրատ Օֆսեթ, 2002;
6. Մարթեան, Յակոբ. *Գրի ծագումը եւ տարածումը*, դասախօսուած՝ Սօֆիայի «Հայ օրիորդաց միութեան», Սօֆիա, Պ. Պալլզճեան-Յար Պօրիս 89, 1928;
7. Մարթեան, Յակոբ. *Յօղուածներ*, Խթանապուկ, 2000;
8. Միրզոյան, Էլինա. «Մարմարան»՝ *հայ մշակույթի հանգրվան*, «Էջմիածին» կրոնական և հայագիտական հանդես, Ս. Էջմիածին, 2011, հատոր ԿԷ, հ. Ժ;
9. Շառոյեան, Լեւոն. *Ս. Յակոբ Մծրնացիէն մինչեւ Յակոբ Տիլաչար (թրքահայ լեզուաբան ու համայնագետ Յակոբ Մարթեանի մահուան 35ամեակին առիթով)*, «Նոր Յառաջ», Փետրուար 8, 2014;
10. Պոզնանսկա, Զրիստինա. *Հին և նոր Թուրքիան*, Երևան, Հայաստան, 1985;
11. Raffi Bedrosyan, *Trauma and Resilience Armenians in Turkey, Hidden, not hidden and no longer hidden*, London, Gomidas Institute, 2019;
12. *The Turkey of Atatürk, Social Process in the Turkish Reformation* by Donald Everett Webster, The Collegiate Press, George Banta Publishing Company, 1939, Menasha, Wisconsin.

WORKS CITED

1. Aghayan, C'atur. *Hayery' T'urqiyayum*. Yerevan, Hayastan, [Armenians in Turkey] 1994. (In Armenian);
2. Shar'oyean, Lewon. *Yakob Mc'bnacie'n minchew Yakob Tilachar (t'rqahay lezuaban u hamaynage't Yakob Mart'aeani mahuan 35-ameakin ar'it'ov)*. [From Jacob of Nesbin to Jacob Dilachar (on the occasion of the 35th anniversary of the death of Turkish linguist and encyclopedist Jacob Martyan)], "Nor Harach", February 8 2014 (In Armenian);

3. Aptalean, A. *Akob Tilachar – latinatar' t'rqere'ni knqahayry'*. "Nor Harach", [*Jacob Tilachar – the Godfather of Latin-Script Turkish*] "Azad or", March 16 2017. (In Armenian);
4. Hatte'twean, R'oper. *Otarakanner ashkhataseneakis mej kam Ist'anpulahay grakanut'ean vepy'*. Istanbul, Marmara-Murat Offset, [*Foreigners in My Office or the Novel of Armenian Literature of Istanbul*] 2002. (In Armenian);
5. *Haykakan Sovetakan Hanragitaran*, hator 7. Yerevan [*Armenian Soviet Encyclopedia*, vol. 7] 1981. (In Armenian);
6. Mart'aeon, Yakob. *Gri c'agumy' ew tarac'umy', dasakho'suac' So'fiayi "Hay o'riordac miut'ean"*. Sofia, B. Balikchyan-Tsar Boris 89, [*The Origin and Spreading of Letters, the Lecture Held at Armenian Girls' Union*] 1928. (In Armenian);
7. Mart'aeon, Yakob. *Yo'duac'ner*. Istanbul, [*Articles*] 2000. (In Armenian);
8. Mirzoyan, E'lina. "*Marmaran*" hay mshakuyt'i hangrvan. [*"Marmara", a Haven of Armenian Culture*. Echmiadzin] 2011;
9. Poznanska, Qristina. *Hin ev nor T'urqian*. Yerevan, Armenia, [*Old and New Turkey*] 1985. (In Armenian);
10. Safrastyan, Ruben et al. *T'urqiyayi Hanrapetut'yan patmut'yun. Buhakan dasagirq'*. Yerevan, VMV-Print, [*The History of the Republic of Turkey. Textbook for HEIs*] 2018. (In Armenian).

AGOP MARTAYAN (DILÂÇAR) LINGUIST

ASHOT MKRYAN

*Yerevan State University, Faculty of the Armenian Philology,
Department of History of the Armenian Language and
General Linguistics, Master's Student,
Yerevan, the Republic of Armenia*

The article is dedicated to the life and activities of famous Armenian linguist, translator, historian, literary critic, pedagogue and reformer Agop Martayan.

The particular focus of the article is on the cultural, scientific and educational reforms that took place in the republican Turkey, among which the transition from Arabic script to the Latin one was a prominent event where the famous linguist played a big role.

Martayan had advised Mustafa Kemal on state building, especially on the matters of language building. This fact further emphasizes the importance of reflecting upon Agop Martayan's activities.

The purpose of this article is to present and examine Martayan's personality, some episodes of his life and the reforms he made.

The main aim pursued by the article is to illustrate Martayan's activities in the light of their benefit for Armenians. The study has applied a number of historical, biographical, inquiry and analytical methods.

The analysis and comparison of the existing literature on the subject allow to conclude that the Armenian linguist has not only greatly contributed to the scientific and cultural establishments of the Turkish Republic, but also to the preservation of a developed national language of Turkey's local Armenian community by striving so that they did not lose their linguistic identity.

Key words: *Turkish Republic, Agop Martayan, Dilâçar, linguist, Mustafa Kemal, Atatürk, alphabet, reforms.*

ЛИНГВИСТ АГОП МАРТАЯН (ДИЛЯЧАР)**АШОТ МКРЯН**

*магистрант кафедры истории армянского языка и
общего языкознания факультета армянской филологии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Статья посвящена судьбе и деятельности выдающегося армянского лингвиста и переводчика, историка и литературоведа, педагога и реформатора Агопа Мартаяна.

В статье сделан особый акцент на культурных, научных и образовательных реформах, имевших место в республиканской Турции, среди которых из важнейшим фактом стал переход от арабского алфавита к латинскому; известный лингвист Агоп Мартаян сыграл в этом процессе большую роль.

В деле государственного строительства, в частности, в области языковых реформ, Мартаян выступил как советчик Мустафы Кемалья. Это обстоятельство свидетельствует о большой важности обращения к деятельности Агопа Мартаяна.

Цель данной статьи – представление личности Мартаяна, рассмотрение некоторых эпизодов его жизни и осуществлённых им реформ.

В рамках исследования была поставлена основная задача осветить проармянскую деятельность Мартаяна. В процессе исследования нами применялись исторический, биографический, исследовательский и аналитический методы.

Анализ и сопоставление литературы по рассматриваемой теме дают основание заключить, что армянский лингвист внёс большой вклад не только в становление научно-культурной жизни Турецкой Республики, но и способствовал делу сохранения национального языка местного армянства. Мартаян боролся за то, чтобы местные армяне не потеряли своей языковой идентичности.

Ключевые слова: *Турецкая Республика, Агоп Мартаян, Дилячар, лингвист, Мустафа Кемаль, Ататюрк, алфавит, реформы.*